Приложение 1

Условия и положения использования мобильного банкинга VTB Online

1. Общие положения

1.1. Настоящие Условия и положения (далее — «Соглашение») регулируют порядок использования мобильного приложения «VTB Online» (далее — «Приложение»), предоставляемого Банка ВТБ (Армения), зарегистрированным и действующим в соответствии с законодательством Республики Армения (далее — «Банк»).
1.2. Использование Приложения означает полное и безоговорочное согласие Пользователя с условиями настоящего Соглашения.
1.3. В случае несогласия с условиями Соглашения Пользователь обязан прекратить использование Приложения.

2. Термины и определения

- **Пользователь** — физическое лицо, являющееся клиентом Банка и использующее Приложение.
- **Учетная запись** — персонализированная среда Пользователя в Приложении.
- **Аутентификационные данные** — логин, пароль, PIN-код, одноразовые пароли, биометрические данные и иные средства идентификации.

3. Регистрация и идентификация

3.1. Доступ к Приложению предоставляется после прохождения идентификации и аутентификации в соответствии с требованиями Банка и нормативными актами Центрального банка Республики Армения.
3.2. Пользователь обязуется обеспечивать сохранность своих аутентификационных данных и не передавать их третьим лицам.
3.3. Все операции, совершенные с использованием учетной записи Пользователя, считаются совершенными Пользователем, если иное не доказано в установленном законом порядке.

4. Услуги, предоставляемые через Приложение

4.1. Через Приложение Пользователю могут предоставляться следующие услуги:

- получение информации о счетах, вкладах, кредитах и остатках;
- осуществление платежей и переводов;
- управление банковскими картами;
- подача заявок на банковские продукты;
- открытие банковских продуктов;
- чат банк, получение уведомлений и сообщений от Банка.

4.2. Перечень услуг может изменяться Банком в одностороннем порядке.

5. Права и обязанности сторон

Пользователь обязуется:

- предоставлять достоверную и актуальную информацию;
- соблюдать требования законодательства Республики Армения;
- незамедлительно уведомлять Банк о фактах утраты устройства или подозрении на несанкционированный доступ.

Банк вправе:

- выпускать обновления, новые версии и модификации Приложения, в том числе направленные на улучшение функциональности, безопасности и стабильности работы. Установка таких обновлений может осуществляться автоматически и не требует получения дополнительного согласоя Пользователя.
- приостанавливать выполнение операций при наличии подозрений в мошенничестве или в целях соблюдения AML/CFT требований;
- запрашивать дополнительные сведения и документы в случаях, предусмотренных законом.

6. Условия осуществления операций

6.1. Операции осуществляются Банком в течение 1–3 рабочих дней с момента получения операции Банком, по тарифам и курсу конвертации, действующим на момент фактического осуществления операции, если при выполнении операции была произведена конвертация.

6.2. Операции в Приложении осуществляются в соответствии с действующими тарифами Банка.

6.3. Тарифы публикуются на официальном сайте Банка по адресу https://vtb.am/ и/или в Приложении и считаются доведенными до сведения Пользователя.

7. Персональные данные и банковская тайна

7.1. Банк осуществляет обработку персональных данных Пользователя в соответствии с Законом Республики Армения «О защите персональных данных».

7.2. Информация о счетах и операциях Пользователя является банковской тайной и защищается в соответствии с законодательством Республики Армения.

7.3. Пользователь дает согласие на обработку своих персональных данных в целях предоставления банковских услуг.

7.4. При открытии банковских продуктов поставленная галочка идентифицируется как ознакомление с условиями и тарифами продукта, а также согласие на обработку персональных данных.

8. Безопасность

8.1. Пользователь несет ответственность за безопасность своего мобильного устройства и установленного на нем программного обеспечения.
8.2. Банк не несет ответственности за убытки, возникшие вследствие заражения устройства вредоносным ПО или действий третьих лиц вне контроля Банка.

Защита Вашего Мобильного Устройства

- Всегда устанавливайте сложный пароль, PIN-код или используйте биометрические данные (отпечаток пальца, Face ID) для блокировки Вашего телефона.
- Регулярно обновляйте программное обеспечение телефона, устанавливая последние версии операционной системы и приложения VTB Online.
- В настройках устройства отключите автосохранение паролей: не сохраняйте/не разрешайте браузеру или телефону сохранять пароли для входа в мобильное приложение.
- Используйте антивирусные программы.
- Не передавайте Ваш смартфон третьим лицам.

Защищайте операции по приложению

- Загружайте приложение Банка только с официального сайта Банка (https://vtb.am/), либо обращайтесь в Банк, позвонив в Контакт-центр по номеру 87-87 или посетив любой филиал Банка.
- Никому не сообщайте Ваш PIN-код, пароли, данные карты или счета, включая CVC/CVV, а также одноразовые коды, полученные по SMS/Push-уведомлениям. Банк никогда не связывается с Вами для уточнения паролей, кодов или данных карты.
- Для входа в приложение используйте сложный пароль, не связанный с личной информацией (имя, дата рождения и т.п.), а также биометрические данные (отпечаток пальца, Face ID).
- Регулярно меняйте пароль и PIN-код для входа в приложение.
- Никогда не переходите по ссылкам из подозрительных SMS или писем.
- Регулярно проверяйте движения по счетам, и при обнаружении подозрительных операций немедленно связывайтесь с Банком.
- Никогда не доверяйте «сотрудникам безопасности», которые просят установить на Ваш телефон программы удалённого управления (AnyDesk, TeamViewer и др.).
- В случае подозрительного звонка немедленно свяжитесь с Банком, позвонив по номеру 87-87.

Обеспечивайте безопасность сети

- Остерегайтесь публичных Wi-Fi сетей, которые не требуют пароля. Не совершайте финансовые операции при подключении к общедоступным (бесплатным) Wi-Fi сетям.

- Проверяйте URL-адреса, убеждаясь, что адрес начинается с https:// и ищите значок закрытого замка.
- Если приложение неожиданно запрашивает повторный ввод пароля или данных карты, прекратите действия и перезагрузите устройство. Если ситуация повторяется, свяжитесь с Банком.

Что делать в случае подозрения

- Если Вы заметили подозрительную операцию, потеряли телефон или считаете, что Ваши данные находятся под угрозой, немедленно позвоните в Банк.
- Измените пароли во всех связанных приложениях.
- При необходимости попросите оператора заблокировать карту и/или доступ к мобильному приложению.
- Вы также можете заблокировать приложение через раздел «Настройки» в VTB Online, после чего приложение станет недоступным на всех устройствах. Для разблокировки приложения необходимо будет связаться с Банком.

9. Ограничение ответственности

9.1. Банк не несет ответственности за временную недоступность Приложения по причинам, не зависящим от Банка (включая сбои связи, действия операторов связи, форс-мажор).

9.2. Ответственность Банка ограничивается в пределах, установленных законодательством Республики Армения.

10. Противодействие легализации доходов и финансированию терроризма (AML/CFT)

10.1. Банк осуществляет меры по противодействию легализации (отмыванию) доходов, полученных преступным путем, и финансированию терроризма в соответствии с законодательством Республики Армения, включая требования Центрального банка Республики Армения и уполномоченных государственных органов.

10.2. Пользователь подтверждает и гарантирует, что:

- все средства, используемые в операциях через Приложение, имеют законное происхождение;
- операции не связаны с отмыванием доходов, финансированием терроризма, распространением оружия массового уничтожения или иной незаконной деятельностью;
- Пользователь не включен в санкционные списки и перечни лиц, связанных с финансированием терроризма, применяемые в Республике Армения.

10.3. В целях соблюдения требований AML/CFT Банк вправе:

- осуществлять идентификацию и верификацию Пользователя, включая удаленную идентификацию;

- запрашивать у Пользователя дополнительные сведения и документы, в том числе информацию об источнике происхождения средств и целях операций;
- осуществлять мониторинг операций Пользователя, включая автоматизированный анализ и оценку рисков;
- приостанавливать, отклонять или ограничивать выполнение операций без предварительного уведомления Пользователя.

10.4. Банк вправе отказать в совершении операции либо ограничить доступ к Приложению в случаях:

- непредоставления или предоставления недостоверных сведений Пользователем;
- выявления подозрительных или необычных операций;
- наличия оснований полагать, что операция нарушает требования AML/CFT или санкционного законодательства.

10.5. Пользователь обязуется по запросу Банка своевременно предоставлять запрашиваемую информацию и документы. Непредоставление таких сведений может повлечь отказ в оказании услуг или прекращение деловых отношений в порядке, установленном законодательством Республики Армения.

10.6. Банк не обязан информировать Пользователя о применении мер финансового мониторинга, приостановлении операций или направлении информации в уполномоченные органы, если такое информирование запрещено законодательством Республики Армения.

10.7. Применение Банком мер AML/CFT не является нарушением обязательств Банка перед Пользователем и не влечет ответственности за возможные убытки Пользователя, за исключением случаев, прямо предусмотренных законодательством Республики Армения.

11. Приостановление и прекращение доступа

11.1. Банк вправе временно приостановить или прекратить доступ Пользователя к Приложению в случаях нарушения Соглашения, требований закона или нормативных актов Центрального банка Республики Армения.

11.2. Пользователь вправе прекратить использование Приложения в любое время.

12. Изменение Соглашения

12.1. Банк вправе вносить изменения в настоящее Соглашение в одностороннем порядке.

12.2. Изменения вступают в силу с момента их публикации в Приложении или на официальном сайте Банка.

13. Применимое право и разрешение споров

13.1. Настоящее Соглашение регулируется законодательством Республики Армения.
13.2. Споры разрешаются путем переговоров, а при недостижении соглашения — в судах Республики Армения в установленном законом порядке.

14. Контактная информация

Банк ВТБ (Армения)
Юридический адрес: Республика Армения, Ереван, Манандян 33/3, 0006
Электронная почта: headoffice@vtb.am
Телефон: +374 10 513 749

VTB Online մոբայլ բանկինգի օգտագործման պայմաններ և դրույթներ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն պայմաններն ու դրույթները (այսուհետ՝ «ՀամաձայնությունՀամաձայնություն կարգավորում են «VTB Online» բջջային հավելվածի (այսուհետ՝ «Հավելված») օգտագործման կարգը, որը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան գրանցված և գործող «ՎՏԲ (Հայաստան) Բանկ» ՓԲԸ-ի կողմից (այսուհետ՝ «Բանկ»):

1.2. Հավելվածի օգտագործումը նշանակում է Օգտատիրոջ լիակատար և անվերապահ համաձայնությունը սույն Համաձայնության պայմաններին:

1.3. Համաձայնության պայմանների հետ անհամաձայնության դեպքում Օգտատերը պարտավոր է դադարեցնել Հավելվածի օգտագործումը:

2. Տերմիններ և սահմանումներ

- **Օգտատեր** — ֆիզիկական անձ, որը հանդիսանում է Բանկի հաճախորդ և օգտագործում է Հավելվածը:
- **Հաշիվ (օգտահաշիվ)** — Օգտատիրոջ անհատականացված միջավայրը Հավելվածում:
- **Նույնականացման տվյալներ** — մուտքանուն, գաղտնաբառ, PIN կոդ, մեկանգամյա գաղտնաբառեր, կենսաչափական տվյալներ և նույնականացման այլ միջոցներ:

3. Գրանցում և նույնականացում

3.1. Հավելվածին հասանելիությունը տրամադրվում է նույնականացում և վերիֆիկացիա անցնելուց հետո՝ Բանկի պահանջներին և Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերին համապատասխան:

3.2. Օգտատերը պարտավորվում է ապահովել իր նույնականացման տվյալների անվտանգությունը և չփոխանցել դրանք երրորդ անձանց:

3.3. Օգտատիրոջ օգտահաշվի օգտագործմամբ կատարված բոլոր գործարքները համարվում են կատարված Օգտատիրոջ կողմից, եթե օրենքով սահմանված կարգով այլ բան չի ապացուցվել:

4. Հավելվածի միջոցով տրամադրվող ծառայություններ

4.1. Հավելվածի միջոցով Օգտատիրոջը կարող են տրամադրվել հետևյալ ծառայությունները

- հաշիվների, ավանդների, վարկերի և մնացորդների վերաբերյալ տեղեկատվության ստացում,
- վճարումների և փոխանցումների իրականացում,
- բանկային քարտերի կառավարում,

- բանկային պրոդուկտների հայտերի ներկայացում,
- բանկային պրոդուկտների բացում,
- Չատ բանկ ծառայություն, Բանկից ծանուցումների և հաղորդագրությունների ստացում:

4.2. Ծառայությունների ցանկը կարող է միակողմանի փոփոխվել Բանկի կողմից:

5. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

Օգտատերը պարտավորվում է

- տրամադրել ճշգրիտ և արդիական տեղեկատվություն,
- պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները,
- անհապաղ տեղեկացնել Բանկին սարքի կորստի կամ չարտոնված մուտքի կասկածի դեպքերի մասին:

Բանկն իրավունք ունի

- թողարկել Հավելվածի թարմացումներ, նոր տարբերակներ և փոփոխություններ, այդ թվում՝ ֆունկցիոնալության, անվտանգության և աշխատանքի կայունության բարելավման նպատակով: Նման թարմացումների տեղադրումը կարող է իրականացվել ավտոմատ կերպով և չի պահանջում Օգտատիրոջ լրացուցիչ համաձայնությունը
- կասեցնել գործարքների կատարումը խարդախության կասկածների կամ AML/CFT պահանջների պահպանման նպատակով,
- օրենքով նախատեսված դեպքերում պահանջել լրացուցիչ տեղեկություններ և փաստաթղթեր:

6. Գործարքների կատարման պայմաններ

6.1. Գործարքները կատարվում են Բանկի կողմից գործարքի ստացման պահից սկսած 1-3 աշխատանքային օրվա ընթացքում՝ գործարքի փաստացի կատարման պահի սակագներով և փոխարկման փոխարժեքով, եթե գործարքի կատարման համար տեղի է ունեցել փոխարկում:

6.2. Հավելվածում իրականացվող գործարքները կատարվում են Բանկի գործող սակագներին համապատասխան:

6.3. Սակագները հրապարակվում են Բանկի պաշտոնական կայքում՝ https://vtb.am/ հասցեով և/կամ Հավելվածում և համարվում են Օգտատիրոջը պատշաճ կերպով ներկայացված:

7. Անձնական տվյալներ և բանկային գաղտնիք

7.1. Բանկը իրականացնում է Օգտատիրոջ անձնական տվյալների մշակում՝ Հայաստանի Հանրապետության «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքին համապատասխան:

7.2. Օգտատիրոջ հաշիվների և գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը հանդիսանում է բանկային գաղտնիք և պաշտպանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

7.3. Օգտատերը տալիս է իր համաձայնությունը անձնական տվյալների մշակման համար՝ բանկային ծառայությունների մատուցման նպատակով:

7.4. Բանկային պրոդուկտների բացման ժամանակ նշված նշագիծը (checkbox) համարվում է պրոդուկտի պայմաններին և սակագներին ծանոթանալու, ինչպես նաև անձնական տվյալների մշակման համաձայնություն տալու փաստ:

8. Անվտանգություն

8.1. Օգտատերը պատասխանատու է իր մոբայլ սարքի և դրա վրա տեղադրված ծրագրային ապահովման անվտանգության համար:

8.2. Բանկը պատասխանատվություն չի կրում սարքի վնասակար ծրագրային ապահովմամբ վարակման կամ Բանկի վերահսկողությունից դուրս գտնվող երրորդ անձանց գործողությունների հետևանքով առաջացած վնասների համար:

Պաշտպանեք Ձեր բջջային սարքը

- Միշտ սահմանեք բարդ գաղտնաբառ, գրաֆիկական բանալի, PIN կոդ կամ օգտագործեք կենսաչափական տվյալներ (մատնահետք, Face ID)՝ Ձեր հեռախոսը արգելափակելու համար:
- Պարբերաբար թարմացրեք հեռախոսի ծրագրային ապահովումը՝ տեղադրելով Ձեր հեռախոսի օպերացիոն համակարգի և VTB Online հավելվածի վերջին թարմացումները:
- Սարքի կարգավորումներից անջատեք ծրագրերի ավտոմատ թարմացումները. մի պահպանեք/թույլատրեք բրաուզերին կամ հեռախոսին պահպանել մուտքի գաղտնաբառերը մոբայլ հավելվածի համար:
- Օգտագործեք հակավիրուսային ծրագրեր:
- Մի փոխանցեք Ձեր սմարթֆոնը երրորդ անձանց:

Պաշտպանեք հավելվածով գործողությունները

- Բանկի հավելվածը ներբեռնեք միայն Բանկի պաշտոնական կայքից (https://vtb.am/), կամ դիմեք Բանկին՝ զանգահարելով Զանգերի կենտրոն 87-87 հեռախոսահամարով կամ մոտեցեք Բանկի ցանկացած մասնաճյուղ:
- Ոչ ոքի մի փոխանցեք Ձեր PIN կոդը, գաղտնաբառեր, քարտի կամ հաշվի տվյալներ, ներառյալ CVC/CVV կամ SMS/Push հաղորդագրություններով ստացվող միանգամյա կոդեր: Բանկը երբեք չի կապվում Ձեզ հետ՝ ճշտելու Ձեր գաղտնաբառերը, կոդերը կամ քարտի տվյալները:
- Հավելված մուտք գործելու համար օգտագործեք բարդ գաղտնաբառ, որը կապված չէ անձնական տվյալների հետ (անուն, ծննդյան ամսաթիվ և այլն) և կենսաչափական տվյալներ (մատնահետք, Face ID):
- Պարբերաբար փոխեք հավելված մուտք գործելու գաղտաբառը, PIN կոդը:
- Երբեք մի անցեք կասկածելի SMS-երի կամ նամակների հղումներով:

- Պարբերաբար ստուգեք հաշիվների շարժերը, և կասկածելի գործարքներ նկատելու դեպքում անմիջապես կապվեք Բանկի հետ:
- Երբեք մի հավատացեք «անվտանգության աշխատակիցներին», ովքեր խնդրում են Ձեր հեռախոսում տեղադրել հեռավար կառավարող ծրագրեր (AnyDesk, TeamViewer և այլն):
- Կասկածելի զանգ ստանալու դեպքում անիմիջապես կապվեք Բանկի հետ՝ զանգահարելով 87-87:

Պահպանեք ցանցի անվտանգությունը

- Զգուշացեք հանրային Wi-Fi-ներից, որոնք չեն պահանջում մուտքի գաղտնաբառ: Մի կատարեք ֆինանսական գործարքներ, երբ միացված եք հանրային (անվճար) Wi-Fi ցանցերին:
- Ստուգեք URL-հասցեները, համոզվելով, որ հասցեն սկսվում է https://-ով և որոնեք փակված կողպեքի նշանը:
- Եթե հավելվածը անսպասելիորեն խնդրում է կրկին մուտքագրել գաղտնաբառը կամ քարտի տվյալները, դադարեցրեք գործողությունները և վերաթողարկեք սարքը: Կրկնվելու դեպքում կապվեք Բանկի հետ:

Ինչ անել կասկածի դեպքում

- Եթե նկատել եք կասկածելի գործարք, կորցրել եք հեռախոսը կամ կարծում եք, որ Ձեր տվյալները վտանգված են, անմիջապես զանգահարեք Բանկ:
- Փոխեք գաղտնաբառերը բոլոր փոխկապակցված հավելվածներում:
- Անհրաժեշտության դեպքում խնդրեք օպերատորին արգելափակել քարտը և/կամ մուտքը բջջային հավելված:
- Կարող եք նաև VTB Online հավելվածի Կարգավորումներից արգելափակել հավելվածը, և հավելվածը կդառնա անհասանելի բոլոր սարքերում: Հավելվածը արգելափակումից հանելու համար կապվեք Բանկի հետ:

9. Պատասխանատվության սահմանափակում

9.1. Բանկը պատասխանատվություն չի կրում Հավելվածի ժամանակավոր անհասանելիության համար՝ Բանկից անկախ պատճառներով (ներառյալ կապի խափանումները, կապի օպերատորների գործողությունները, ֆորս-մաժորը):

9.2. Բանկի պատասխանատվությունը սահմանափակվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չափով:

10. Եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքար (AML/CFT)

10.1. Բանկը իրականացնում է հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (լվացման) և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջոցառումներ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, ներառյալ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի և լիազորված պետական մարմինների պահանջները:

10.2. Օգտատերը հաստատում և երաշխավորում է, որ.

- Հավելվածի միջոցով իրականացվող գործարքներում օգտագործվող բոլոր միջոցներն ունեն օրինական ծագում,
- գործարքները կապված չեն եկամուտների լվացման, ահաբեկչության ֆինանսավորման, զանգվածային ոչնչացման զենքի տարածման կամ այլ անօրինական գործունեության հետ,
- Օգտատերը ներառված չէ Հայաստանի Հանրապետությունում կիրառվող պատժամիջոցների ցանկերում կամ ահաբեկչության ֆինանսավորման հետ կապված անձանց ցուցակներում:

10.3. AML/CFT պահանջների պահպանման նպատակով Բանկն իրավունք ունի.

- իրականացնել Օգտատիրոջ նույնականացում և վերիֆիկացում, ներառյալ հեռահար նույնականացում,
- պահանջել Օգտատիրոջից լրացուցիչ տեղեկություններ և փաստաթղթեր, այդ թվում՝ միջոցների ծագման աղբյուրի և գործարքների նպատակների վերաբերյալ տեղեկատվություն,
- իրականացնել Օգտատիրոջ գործարքների մոնիթորինգ, ներառյալ ավտոմատացված վերլուծություն և ռիսկերի գնահատում,
- առանց նախնական ծանուցման կասեցնել, մերժել կամ սահմանափակել գործարքների իրականացումը:

10.4. Բանկն իրավունք ունի մերժել գործարքի իրականացումը կամ սահմանափակել Հավելվածի հասանելիությունը հետևյալ դեպքերում

- Օգտատիրոջ կողմից տեղեկությունների չտրամադրում կամ ոչ արժանահավատ տեղեկությունների տրամադրում,
- կասկածելի կամ ոչ սովորական գործարքների հայտնաբերում,
- հիմքեր ունենալը կարծելու, որ գործարքը խախտում է AML/CFT կամ պատժամիջոցների վերաբերյալ օրենսդրության պահանջները:

10.5. Օգտատերը պարտավորվում է Բանկի պահանջով ժամանակին տրամադրել պահանջվող տեղեկատվությունն ու փաստաթղթերը: Նման տեղեկությունների չտրամադրումը կարող է հանգեցնել ծառայությունների մատուցման մերժման կամ գործարար հարաբերությունների դադարեցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

10.6. Բանկը պարտավոր չէ տեղեկացնել Օգտատիրոջը ֆինանսական մոնիթորինգի միջոցների կիրառման, գործարքների կասեցման կամ լիազորված մարմիններին տեղեկատվության փոխանցման մասին, եթե նման տեղեկացումը արգելված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10.7. Բանկի կողմից AML/CFT միջոցների կիրառումը չի հանդիսանում Բանկի պարտավորությունների խախտում Օգտատիրոջ նկատմամբ և չի առաջացնում պատասխանատվություն Օգտատիրոջ հնարավոր վնասների համար,

բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ուղղակիորեն նախատեսված դեպքերի:

11. Հասանելիության կասեցում և դադարեցում

11.1. Բանկն իրավունք ունի ժամանակավորապես կասեցնել կամ դադարեցնել Օգտատիրոջ հասանելիությունը Հավելվածին՝ Համաձայնության, օրենքի կամ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի նորմատիվ ակտերի պահանջների խախտման դեպքերում:

11.2. Օգտատերը իրավունք ունի ցանկացած ժամանակ դադարեցնել Հավելվածի օգտագործումը:

12. Համաձայնության փոփոխություն

12.1. Բանկն իրավունք ունի միակողմանի կարգով փոփոխություններ կատարել սույն Համաձայնագրում:

12.2. Փոփոխություններն ուժի մեջ են մտնում Հավելվածում կամ Բանկի պաշտոնական կայքում դրանց հրապարակման պահից:

13. Կիրառելի իրավունք և վեճերի լուծում

13.1. Սույն Համաձայնությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

13.2. Վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չհասնելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության դատարաններում՝ օրենքով սահմանված կարգով:

14. Կոնտակտային տվյալներ

«ՎՏԲ (Հայաստան) Բանկ» ՓԲԸ
Իրավաբանական հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան,
Մանանդյան 33/3, 0006
Էլեկտրոնային փոստ՝ headoffice@vtb.am
Հեռախոս՝ +374 10 513 749